ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա. Ն. ՀԱՅՐՈՒՆԻ, պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Յ. Լեփսիուսը շարունակում էր իր ամբողջ ավյունն ի սպաս դնել հայ ժողովրդի դեմ կատարված ոճրագործությունների դատապարտմանն ու նրա արդարացի հատուցմանը նպաստելու գործին: Իր հիմնադրած պարբերականի՝ 1918 թ. սեպտեմբեր-դեկտեմբերի համարում նա հրապարակեց մի ծավալուն հոդված «Ի՞նչ են արել հայերի հետ» վերնագրով[1]: Հոդվածի առաջին՝ «Խոսելու ժամանակը եկել է», հատվածում պարզաբանումներ էին արվում Մեծ Եղեռնի չափերի և հետևանքների վերաբերյալ: Հայ ժողովուրդը, որի թվաքանակը Թուրքիայում պատերազմից առաջ հասնում էր մեկ ամբողջ երեք քառորդ միլիոնի, նշում էր Լեփսիուսը, պատերազմի ժամանակ թուրքական կառավարության կողմից Հայկական լեռնաշխարհի, Անատոլիայի, Կիլիկիայի և Միջագետքի իր բնակավայրերից ամբողջությամբ տեղահանվել է, զրկվել ունեցվածքից, աքսորվել արաբական անապատներ և մասամբ ճանապարհին մորթվել, մասամբ, աքսորավայր հասնելով, «կանոնավոր կերպով» սովամահության է ենթարկվել: Գերմանական հյուպատոսների գնահատմամբ գոհերի թիվը կազմում էր 1 միլիոն, որի մոտ կեսը կանայք և երեխաներ էին: Բռնությամբ իսլամացված քառորդ միլիոն կանանց և աղջիկների քարշ են տվել թուրքական և քրդական հարեմներ: Եվս այդքանը որպես մուրացիկ փախել է Կովկաս: Անապատներում հավանաբար դեռ 150 հազար մարդ կարող էր կենդանի մնացած լինել և փրկվել, եթե ամենակարճ ժամկետում օգնություն ստանար[2]:

Թեև հայ ժողովրդի բնաջնջման հարցում Գերմանիայի ուղղակի մեղսակցության խնդիրը պետք է պարզվեր միայն դիվանագիտական փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո, այնուամենայնիվ, Լեփսիուսի համոզմամբ, Գերմանիան գրեթե ոչինչ չէր արել՝ գործնականում հերքելու ամբողջ աշխարհի կողմից հնչող այն մեղադրանքները, որ նա եթե ոչ «դրդման», ապա «հանդուրժողականության և փոքրոգի անգործունեության միջոցով» մեղսակից է դարձել մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի կործանմանը[3]: «Այն ամենը, ինչ ես պատերազմի տասնա-

[1] Տես *J. Lepsius*. Was hat man den Armeniern getan? «Mitteilungen aus der Arbeit von D. Dr. Johannes Lepsius», 1918, S. 113–118:

[2] Տես նույն տեղում, էջ 114:

[3] Տես նույն տեղում, էջ 116:

պատիկ ծանրացուցիչ հանգամանքներում կարողացա անել... շատ էր զիջում այն բանին, ինչ կարող էր արվել: Ոչ ոք չփորձեց անել հնարավորը...»[4]- նշում էր Լեփսիուսը: Ընդհակառակը, շեշտում էր նա, գերմանական մամուլը նախապատրաստեց հեշտությամբ հավատ ներշնչող պատրվակներ. ««անգլիական ստեր», «դավաճանություն հայրենիքի շահերին», զինակցի նկատմամբ աչքերը փակելու պարտավորվածություն: Բոլոր նրանք, ովքեր նման ամոթալի հիմնավորումներով իրենց խիղճը հանգստացրել են, այսօր այլևս ոչ մի պատրվակ չունեն»[5]:

Լեփսիուսի համոզմամբ՝ Գերմանիան գոնե զինադադարից հետո պետք է ապացուցեր, որ կամենում էր իրեն մաքրել մեղսակցության արատից, ուստի նրա հոդվածի երկրորդ՝ «Օգնելու ժամանակը եկել է» վերնագիրը կրող, հատվածը մի ազդու կոչ էր՝ ուղղված ամբողջ Գերմանիայի քրիստոնյաներին. «Արե՛ք, ինչ կարող եք, մեր ժողովրդին բեռնաթափե՛ք անասելի ոճրից: Մեր՝ քրիստոնյաների անունները ազատե՛ք այն նախատինքից, որ մենք Աբելի սպանության համար միայն Կայենի խոսքերն ունեինք: Դեռ ապրում է աքսորված ժողովրդի մնացորդը, որին, կանանց և երեխաների հետ՝ թվով 1,5 միլիոն, քշեցին անապատները: Ճանապարհին սպանված տասնյակ հազարավորների դիերը թունավորեցին օդը, վարակեցին Անատոլիայի և Միջագետքի՝ թիկունքային ճանապարհները: Անապատի ավազը ծածկում են հարյուր հազարավոր սովամահ եղածների դիերը: Հավանաբար դեռ 150 հազար հյուծված կանայք, երեխաներ, զառամյալներ, մուրացիկների մի բազմություն, մահին ընդառաջ է գնում: Դա խղճուկ մնացորդն է մի՝ նախկինում ջանասիրությամբ և տոկուն աշխատանքով վեր խոյացած ժողովրդի, որն իր քրիստոնյա հավատը պահպանեց երկու հազարամյակ: Մի՞թե գեթ նրանք չպիտի իրավունք ունենան կենդանի մնալու: Մի՞թե տասնյակ հազարավոր աղջիկներն ու երեխաները, որոնց որպես հեշտ ավար քարշ տվեցին թուրքական քաղաքներ ու քրդական գյուղեր, ազատության իրավունք չունեն: Մի՞թե պետք է շարունակի մնալ հարյուր հազարավոր քրիստոնյաների հարկադրված օտար հավատը: Պե՞տք է, արդյոք, ամբողջ աշխարհը իրավացի դուրս գա այն հարցում, որ միայն Գերմանիան ոչ մի զգացում չունի քրիստոնյայի անվանն ու մարդկային արժանապատվությանն ուղղված նման նախատինքի հանդեպ: Եթե դուք մեղսակից չեք եղել, ապացուցե՛ք, որ չեք կամենում մեղսակից դառնալ: Ձեզ ցավ չե՞ն պատճառում տասնյակ հազարավոր որբերը: Արե՛ք, ինչ ձեր ուժերի սահմաններում է: Օգնե՛ք փրկել մնացած թշվառներին...»[6]:

Գրաքննության վերացումից հետո Լեփսիուսը վճռեց վերահրատարակել նաև իր՝ «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության վերաբերյալ» աշխատությունը*: Մինչ այդ, սակայն, նա անհրաժեշտ էր համարում կատարել լրացու-

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

[6] Նույն տեղում, էջ 116–117:

* Հայ ժողովրդի՝ տեղահանման և բնաջնջման սոսկալի իրադարձությունները ներկայացնող այդ գիրքը, որը Լեփսիուսը 1916 թ. 20500 տպաքանակով հրատարակել և գաղտնի առաքել էր Գերմանիայի կրոնական, հասարակական և պետական շրջաններին, խիստ մեծ դեր խաղաց հանրությանը հայության վիճակի մասին իրազեկելու և հայ ժողովրդի բարեկամ-

ցիչ քննություն համեմատելով իր աշխատությունում ամփոփված տեղեկությունները և գերմանական դեսպանության ու հյուպատոսությունների տեղեկագրերը, որոնք աշխատության առաջին հրատարակության ժամանակ իրեն մատչելի չէին եղել: Դրանց ուսումնասիրությունը Լեփսիուսը կարևորում էր նաև հայ ժողովրդի բնաջնջման հարցում Գերմանիայի պաշտոնական դիրքորոշմանը ծանոթանալու համար[7]: Ուստի նա, 1918 թ. նոյեմբերի վերջին Հաագայից վերադառնալով Բեռլին, դիմեց ԱԳՆ պետքարտուղար դոկտոր Զոլֆին՝ խնդրելով իրեն թույլատրել ծանոթանալ ԱԳՆ և Կ. Պոլսում դեսպանության դիվանագիտական փաստաթղթերին: Զոլֆը նրան ոչ միայն չմերժեց, այլև, տեղեկացնելով Հայկական հարցի վերաբերյալ «Սպիտակ գիրք» հրատարակելու ԱԳՆ մտադրության մասին*, նշեց, որ նախարարությունը այդ գրքի հրատարակումից կհրաժարվի, եթե Լեփսիուսն ընդունի Հայկական հարցի վերաբերյալ Գերմանիայի դիրքորոշումը պարզաբանելու առաջադրանքը: Լեփսիուսը համաձայնվեց՝ այն պայմանով, որ փաստաթղթերն իրեն մատչելի դարձվեն ամբողջությամբ[8]: Նա այդ պայմանի ապահովումը անհրաժեշտ էր համարում քանի որ՝ միայն իրեն էր վստահում թուրքական կառավարության կողմից հայ ժողովրդի հանդեպ իրականացված մեծ ոճիրի և այդ հարցում Գերմանիայի պաշտոնական դիրքորոշման պարզաբանումը: «Այսօր էլ ես իմ արտոնությունն եմ համարում դառնալու մի ժողովրդի դատապաշտպանը որը թեև պատերազմի պատճառների մեջ չխճճվեց, սակայն նրա նզովյալ բարբարոսության հետևանքով տասնապատիկ ավելի տառապեց, քան աշխարհի ցանկացած այլ ժողովուրդ», հայտարարում էր նա[9]:

ԱԳՆ-ն ընդունեց** Լեփսիուսի պայմանը, և նա ձեռնամուխ եղավ փաստաթղթերի ուսումնասիրության ու հրատարակության պատրաստման գործին, որը տևեց ավելի քան 5 ամիս[10]: «Գերմանիան և Հայաստանը 1914–1918 թվականներին» վերնագրով ժողովածուն լույս տեսավ 1919 թ. մայիսին և ամփոփում էր ոչ միայն գերմանական դիվանագիտական աղբյուրների տեղեկությունները հայ ժողովրդի տեղահանման ու աքսորի վերաբերյալ, այլև այդ իրադարձությունների և առհասարակ Հայկական հարցի առնչությամբ Գերմանիայի դիրքորոշումը պարզաբանող բազմաթիվ կարևորագույն նյութեր. 444 փաստաթուղթ, որոնք

ների թիվը, համապատասխանաբար նաև հայերին Լեփսիուսի կողմից իրականացվող օգնության ծավալը մեծացնելու հարցում:

[7] Տես *J. Lepsius.* Mitteilungen. «Der Orient», 1919, S. 40:

* ԱԳՆ-ն այդ որոշմանը հանգել էր՝ ցանկանալով հերքել Անտանտի երկրների լրատվական միջոցներում շարունակ արծարծվող այն տեսակետը, որ հայ ժողովրդի տեղահանությունը և կոտորածները դրդել և կազմակերպել էր Գերմանիան:

[8] Տես *J. Lepsius.* Mitteilungen, S. 40:

[9] *J. Lepsius.* Was hat man den Armeniern getan? «Mitteilungen... », S. 118.

** ԱԳՆ-ն, սակայն, Լեփսիուսին իրականում տրամադրել էր փաստաթղթերի մի մասը, ինչը հայտնի դարձավ նրան միայն ժողովածուի հրատարակումից հետո:

[10] Տես *J. Lepsius.* Mitteilungen. S. 40:

ընդգրկում էին 1913 թ. սեպտեմբերից մինչև 1918 թ. հոկտեմբեր ժամանակահատվածը և լույս տեսան Լեփսիուսի հեղինակած ներածության հետ[11]:

Բացառելու համար այն կասկածները, թե հրատարակության հարցում կարող էր որոշակի միտում դրսևորված լինել, Լեփսիուսն այնպիսի ընտրություն կատարեց, որով ապահովվում էր թղթակցությունների ժամանակագրական և ներքին բովանդակային շարունակականությունը: Փաստաթղթերն այնքան «խոսուն» էին և այնքան ամբողջական էին ներկայացնում եղելությունը, որ Լեփսիուսն ավելորդ համարեց կատարել լրացուցիչ մեկնաբանություններ և աշխատության ներածականում նշեց. «Ես իմ առաջադրանքը չեմ համարել որևէ առումով ստանձնել մեղադրողի, պաշտպանողի կամ դատավորի դերը: Ես համոզված էի, որ լավագույնս կծառայեմ ճշմարտությանը, եթե սահմանափակվեմ այն բանով, որ հնարավորություն տամ խոսելու փաստաթղթերին, որոնց հիման վրա յուրաքանչյուր ոք կարող է կարծիք կազմել փաստերի և մեղավորության հարցի վերաբերյալ»[12]:

ԱԳՆ տրամադրած տեղեկագրերի ուսումնասիրության շնորհիվ Լեփսիուսին պարզ դարձավ, որ հայ ժողովրդի բնաջնջմանը դրդելու և այն կազմակերպելու վերաբերյալ Գերմանիայի հասցեին Անտանտի մամուլում ի հայտ եկող մեղադրանքներն իրականությանը չէին համապատասխանում[13], և որ դրա կազմակերպման և իրականացման պատասխանատվությունը ծանրանում էր բացառապես թուրքական կառավարության վրա: Այդուհանդերձ, նա շարունակում էր իր հրապարակումներում շեշտել, որ Գերմանիան կրում է բարոյական պատասխանատվություն իր դաշնակցի արարքների համար ու, հետևաբար, պետք է իրեն պարտավորված զգա և ամեն ջանք գործադրի՝ հայ ժողովրդի դեռ կենդանի զավակներին նեցուկ կանգնելու համար: «Այդ ծրագրված զանգվածային սպանդի, մեկ միլիոն քրիստոնյաներին սովամահության ենթարկելու նենգ քաղաքականության, բոլոր հարյուրամյակների հալածանքների պատմության մեջ դեռ իր նմանը չունեցող այդ խայտառակության մեջ ողբերգականը մեզ՝ գերմանացիներիս համար այն է, որ պատերազմի ժամանակ համաշխարհային քաղաքականության շղթայակցումը մեզ կարծես թե դարձրել է մեր զինակցի արյունախում մոլեռանդության մասնակիցը: Թեև փաստաթղթերը մեզ իրավունք են ընձեռում հերքելու մեղսակցության այն մեղադրանքը, որ աշխարհը բարդում է մեզ վրա, սակայն մեր խիղճը ճնշում է մեր զինակցի հանցագործության համար անուղղակի բարոյական պատասխանատվությունը: Մենք չենք կարող հետ բերել այն, ինչ կատարվել է, բայց գոնե պարտավոր ենք որպես բոլոր քրիստոնյա ժողովուրդներից առաջինը կենդանի պահել այն, ինչ դեռ մնացել է այդ նզովյալ արարքի զոհերից», նշում է նա[14]: «Փաստագրական նյութերը, – գրում է նա մեկ այլ տեղ, – մեղավորության հարցը և կոտորածները վերապրած հարյուր հազարավոր կանանց ու երեխաների թշվառությունը, իմ հրապարակումներում աշխարհի աչքի առջև են: Ավետարանական Գերմանիայում ես սպասում եմ գթասրտության մեծ շարժման, որը նույնիսկ մեր զրկանքի պատճառով չի կարող խեղդվել»[15]:

[11] Տես *J. Lepsius.* Deutschland und Armenien 1914–1918: Sammlung diplomatischer Aktenstücke. Potsdam, 1919:

[12] Նույն տեղում, էջ VII:

[13] Տես *J. Lepsius.* Ich bitte alle Leser dieser Zeitschrift .... «Der Orient», 1919, S. 1:

[14] Տես *R. Schäfer.* Geschichte der Deutschen Orient-Mission. Potsdam, 1932, S. 104:

Հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ոճիրը փաստաթղթերի հրապարակման շնորհիվ այնքան հստակ կերպով էր փաստարկված, որ Լեփսիուսի համոզմամբ՝ նույնիսկ «ամենաարմատական թերահավատն ու թուրքասերը» չէր կարող «փաստերի ճշմարտացիության և սոսկալիության վրա աչք փակել»[16]: Սակայն նա մտադիր չէր այդքանով սահմանափակվելու և անընդմեջ իր բոլոր հնարավորությունները գործի էր դնում հայանպաստ քարոզչությունը շարունակելու և զարգացնելու համար: Փաստաթղթերի ուսումնասիրությունը հաստատեց, որ 1916 թ. գարնանը Լեփսիուսի հրատարակած գաղտնի տեղեկագրի նյութերը միանգամայն համապատասխանում էին իրականությանը[17]: Ուստի նա ձեռնամուխ եղավ այդ աշխատության վերահրատարակմանը և այն լույս տեսավ «Հայ ժողովրդի մահուղին» վերնագրով՝ փաստաթղթերի հրապարակումից կարճ ժամանակ անց՝ 1919 թ.[18]: Վերահրատարակված աշխատության բովանդակությունը որևէ փոփոխություն չէր կրել, համալրվել էր միայն մի ներածությամբ, որում հեղինակը ներկայացնում էր գրքի նախապատմությունը և առաջին հրատարակության ու առաքման հարցում ի հայտ եկած խոչընդոտները:

Յոհաննես Լեփսիուս (1858–1926)

Լեփսիուսն իր հրապարակախոսական գործունեությունը շարունակեց նաև թռուցիկների միջոցով, որոնք հրատարակվում և ցրվում էին մեծ տպաքանակով: Միայն 1919 թ. հունվար-մարտ ամիսներին նա կարողացավ հրատարակել ու ցրել չորս տարբեր թռուցիկներ[19]: Ուշագրավ է, որ նրանք, ովքեր հետագայում ևս ցանկություն էին հայտնում տարածման կամ զանազան միջոցառումների ժամանակ օգտագործման համար ունենալու թռուցիկներ, կարող էին դրանք ցանկացած պահի ու ցանկացած տպաքանակով պատվիրել և ստանալ Լեփսիուսի «Օգնության գործի» գրասենյակից[20]: Տեղեկատվության ծավալն էլ ավելի ընդլայնելու և

[15] *J. Lepsius.* Ich bitte alle Leser dieser Zeitschrift ..., S. 1:

[16] Տես *Ռ. Շեֆեր,* Նշ. աշխ., էջ 104:

[17] Տես *J. Lepsius.* Was hat man den Armeniern getan? «Mitteilungen... », S. 118:

[18] Տես *J. Lepsius.* Der Todesgang des Armenischen Volkes. Potsdam, 1919:

[19] Դրանք ունեին հետևյալ վերնագրերը. «Կարելի՞ էր այդ մասին լռել», «Քրիստոնյա ժողովրդի կործանումը», «Կեմախ Բողազիի՝ անեծքի հովտում». «Մի քրիստոնյա ժողովրդի մահվան ճանապարհը» (տես «Zur Beachtung». «Der Orient», 1919, S. 47): Մինչ այդ՝ 1918 թ. վերջին, առաքվել էր ևս մեկ թռուցիկ, որ կրում էր «Ի՞նչ են արել հայերի հետ» անվանումը (տես «Zur Beachtung». «Mitteilungen ... », S. 152):

[20] Տես «Zur Beachtung», S. 47:

բարեկամների հետ կապն ամրապնդելու նպատակով Լեփսիուսը 1919 թ. մայիսին իր «*Mitteilungen...*» պարբերականի անվանումը փոխում է «*Der Orient*»-ի, որն ի տարբերություն նախորդից, տպագրվում էր անհամեմատ ավելի մեծ ծավալով և ամեն ամիս[21]:

Հասարակության ուշադրությունը բևեռելով բազմահազար հայ որբերի աղետալի վիճակի վրա* և շարունակելով իր օգնության աշխատանքները Լեփսիուսն ամենայն աչալրջությամբ հետևում էր խաղաղության գործընթացի զարգացմանը, որը պետք է բախտորոշ նշանակություն ունենար հայ ժողովրդի դեմ կատարված ոճրագործության դատապարտման և տասնամյակներ շարունակ շահարկված Հայկական հարցի լուծման համար: Հատկանշական է, որ դա զինադադարից հետո որքան էլ մոտ և անխուսափելի էր թվում, այնուամենայնիվ Լեփսիուսը չէր շտապում կիսել հայկական վեց վիլայեթների սահմանաներում նոր Հայաստանի ստեղծման՝ հայկական շրջաններում թևածող հույսերը: «Արդյոք փախստականների զանգվածներին երբևէ կվիճակվի՞ վերադառնալ Թուրքիայի հին հայկական

[21] Տես «Mitteilung». «Der Orient», 1919, S. 131:

* Լեփսիուսը վարում էր ակտիվ հրապարակախոսական գործունեություն՝ օգնության աշխատանքներին համայնքների մասնակցությունն առավելագույնս ընդլայնելու նպատակով: Օրինակ՝ 1919 թ. մայիսի 1-ին նա Գերմանիայի ավետարանական քահանաներին հղեց մի ընդարձակ ուղերձ, որում, սրտառուչ տողերով ի մի բերելով հայ ժողովրդի ողբերգությունը, կոչ էր անում հիշելու այն բարոյական պարտքն ու պատասխանատվությունը, որ նրանք ունեին հայերի նկատմամբ: Քսաներորդ դարում աշխարհը տեսավ քրիստոնյաների՝ բոլոր ժամանակների մեծագույն հալածանքը, և Գերմանիան մնաց դրա «լուռ վկան», հայտարարում էր նա: «Այն օգնությունը, որ ես պատերազմի ժամանակ հակառակ բոլոր խոչընդոտներին, իրականացրել եմ, անասելի թշվառության մեծության համեմատությամբ չափազանց խղճուկ էր: Անհնար էր ավելի բարձր ծայնել, քան ես արեցի: Եթե նույնիսկ քարերն աղաղակեին, գրաքննությունը կլռեցներ նրանց... Այժմ, սակայն, երբ մարդկային սերը դարձյալ իրավունք ունի խոսելու, Գերմանիան պետք է ապացուցի, որ իր սիրտն այս աշխարհի տառապանքների նկատմամբ չի քարացել: Ոչստի ես ձեզանից ակնկալում եմ, պարոնա՛յք և եղբայրնե՛ր, որ դուք կդիմեք ձեր համայնքներին. «Դա տեղի է ունեցել: Մենք դրան չկարողացանք խանգարել: Բայց մենք ամաչում ենք որպես քրիստոնյաներ, որ դաշնակցել ենք քրիստոնյաների արյունը հեղող ժողովրդի հետ... Մենք ամաչում ենք, որ երբ դեռ հնարավոր էր օգնել, օգնության պատրաստների ձեռքերը կապեցինք և ականջ դրեցինք ստրկական երկյուղին: Մենք հիմա այլ բան չենք կարող անել, քան ուղղել այն, ինչը դեռ կարելի է ուղղել, փրկել, ինչը դեռ կարելի է փրկել, և բոլոր ուժերով, որ մենք դեռ պահպանել ենք մեր զրկանքներից հետո ձեռք զարկել եղբայրական ժողովրդի վերակենդանացմանը, որը դարձավ մուրացիկների բազմություն, քույր եկեղեցուն, որը վերածվեց փլատակների մի կույտի: Մեր պարտքն է դա՝ Տիրոջն արժանի լինելու համար, մեր պարտքն է դա՝ մեր գերմանացի ժողովրդի կոխկրտված արժանապատվությունը վերականգնելու համար... Միթե՞ շատ կհամարվեր, եթե յուրաքանչյուր ավետարանական համայնք հոգ տաներ գեթ մեկ հայ որբ երեխայի համար...» (տես *Ռ. Շեֆեր*, Նշ. աշխ., էջ 104–105): Այդ և բազում այլ հրապարակումների միջոցով ձեռք բերելով բավականաչափ բարեկամներ և նյութական աջակցություն՝ Լեփսիուսը նախ Ռոհայում, իսկ հետագայում՝ Թուրքիայից հայության վերջնական վտարումից հետո, Սիրիայում և Լիբանանում անընդմեջ շարունակեց հայերին օգնության աշխատանքը, որի մասին մենք այստեղ հանգամանալից կերպով չենք խոսի:

գավառները, արդյոք հայերին տրված խոստումները, որ գոնե արևելյան Անատոլիայի՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Տրապիզոնի և Սվազի մարզերը, հայկական Կովկասի հետ միանալով պիտի դառնան մի անկախ Հայաստան, երբևէ կիրականանա՞ն, գիտեն միայն Փարիզի աստվածները», գրում էր նա 1919 թ. վերջին[22]:

Լեփսիուսի համոզմամբ՝ Անգլիայի շահերից էր բխում Թուրքիային իր ազդեցության տակ պահելը և «շատ չմասնատելը»: ԱՄՆ-ն իր հերթին ի նպաստ հայության միջամտելու միտում չէր դրսևորում: Այդ իրավիճակում նա իրատեսաբար կասկածելի էր համարում, որ հայերի ցանկություններն ամբողջությամբ կիրականանան, և վեց հայկական մարզերը կհատկացվեին նրանց: Այնուհանդերձ, Լեփսիուսի կարծիքով՝ եթե նույնիսկ ոչ այդ մարզերն ամբողջությամբ, ապա գոնե դրանց «մեկ երրորդն» անպատճառ հատկացվելու էր Հայաստանի Հանրապետությանը, որն ի վիճակի չէր կերակրելու իր տարածքում կուտակված հարյուրհազարավոր փախստականների ու որբերի և, «իր նեղ սահմաններում պարփակված», սպասում էր Խաղաղության վեհաժողովի որոշումներին: Նա նկատի ուներ, մասնավորապես, Վանի վիլայեթի մի մասը, Բիթլիս քաղաքը, Մուշի հարթավայրը և որոշ հատվածներ Էրզրումի վիլայեթից՝ Էրզրում քաղաքով հանդերձ[23]:

Սակայն Սևրի հաշտության պայմանագրի դրույթները, աշխարհաքաղաքական ուժերի վերաձևման պայմաններում, ինչպես հայտնի է չկատարվեցին: 1921 թ. Լոնդոնում տեղի ունեցած խորհրդաժողովում դրանք փոխարինվեցին Թուրքիայի արևելյան սահմանների մոտ, այսպես կոչված, Ազգային օջախի ստեղծման գաղափարով, որը 1923 թ. Լոզանի պայմանագրով նույնպես մերժվեց, և Հայկական հարցը վերջնականապես դուրս եկավ մեծ տերությունների քաղաքական օրակարգից[24]:

Հույսերի և հուսախաբությունների այդ դաժան շրջապտույտում Լեփսիուսը շարունակ հայ ժողովրդի հետ էր՝ հրապարակախոսի, վերլուծաբանի և անաչառ քննադատի իր անհատնում ավյունն ի սպաս դնելով նրա շահերի պաշտպանության: Ուշագրավ է, որ Սևրի պայմանագիրը համարելով Թուրքիայի՝ որպես մեծ տերության, փլուզման անշրջելի վկայություն[25], նա, այնուամենայնիվ, մեծ խորագզացությամբ նախազգուշացնում էր նախապես չոգևորվել, քանի որ եթե ԱՄՆ-ը չստանձնի Հայաստանի մանդատը, ապա վերջինս ստիպված կլինի ապավինելու ինքն իրեն և միայնակ, իր ուժերով տիրանալու իր տարածքներին, մի բան, որ եթե ոչ տակավին անհնար, ապա գոնե խիստ անհավանական էր: Ավելին, նա «Հայաստանը և տերությունները» հոդվածում նշում էր, որ եթե նույնիսկ Վիլսոնը որոշեր Հայաստանին տրվող տարածքների սահմանները, ապա հայերը դարձյալ հարկադրված կլինեին դրանք Թուրքիայից զենքով նվաճելու, եթե չէին կամենում

[22] Տես *J. Lepsius.* Not und Hilfe. «Der Orient», 1919, S. 134:

[23] Տես *J. Lepsius.* Die armenische Republik. «Der Orient», 1920, S. 2:

[24] Տես *J. Lepsius.* Die armenische Frage in Lausanne. «Der Orient», 1923, S. 2:

[25] Տես «Der türkische Friedensvertrag». «Der Orient», 1920, S. 32:

«սահմանափակված մնալ Արարատի ստորոտի Կովկասյան հանրապետության չափազանց նեղ տարածքում»[26]:

ՈՒշագրավն այն է, որ Լեփսիուսն այդ կանխատեսումներն արեց 1920 թ. ամռան սկզբին՝ պայմանագրի ստորագրումից ամիսներ առաջ:

Լոնդոնի 1921 թ. բանաձևի ընդունմամբ պարզ դարձավ, որ Լեփսիուսի վերապահությունները միանգամայն հիմնավոր էին, և «փոքր ազգերի ազատարարները», որոնք հայերին «ոսկու լեռներ» էին խոստանում, այժմ նրանց պահանջներին գոնե մասնակիորեն բավարարելու մտադրություն չունեին: Ինչ վերաբերում

Գեներալ ֆոն Զեկտը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Էնվեր փաշայի հետ, իսկ պատերազմից հետո՝ նացիստական Գերմանիայի ֆյուրերի հետ

էր այդ բանաձևով խոստացվող «Ազգային օջախին», ապա Լեփսիուսի համոզմամբ, Թուրքիայում ոչ անկախ նման վարչատարածքային միավորի ստեղծումը և գոյատևումը անիրատեսական և անիրագործելի էր: «Ո՞վ պետք է հոգ տանի, որ Կովկասի սովահար 300-400 հազար հայ փախստականները հետ տարվեն իրենց այդ «հայրենիքը», – գրում էր նա 1921 թ. մայիսին հրատարակած «Խաբված Հայաստանը» հոդվածում, – ոչ ոք: Թուրքերն, անկասկած, տեղի չեն տա: Ո՞վ նրանց կհարկադրի: Ոչ ոք: ՈՒրեմն հայերը ստիպված պետք է լինեն իրենք նվաճելու իրենց «Ազգային օջախը» (որը պետք է լինի թուրքական ենթակայության ներքո)»[27]: Սակայն, եթե հայերը նույնիսկ փորձեն դա անել, շարունակում էր իր միտքը Լեփսիուսը, ապա Անտանտը, անկասկած, այդ կիամարի խաղաղության ոտնահարում, քանի որ անգլիացիները և ֆրանսիացիները կամենում են թուրքերի հետ կատարել գործարքներ և իրականացնել իրենց այն «սուրբ երդումը», թե թուրքերն այլևս չպետք է իշխեն քրիստոնյա ազգերի վրա: Հետևաբար, ըստ

[26] *J. Lepsius.* Armenien und die Mächte. «Der Orient», 1920, S. 38.

[27] *J. Lepsius.* Das betrogene Armenien. «Der Orient», 1921, S. 53.

Լեփսիուսի, նման «Օջախի» ստեղծումն անհնար է, և թուրքերը շարունակելու են երկիրն իրենց պահել, իսկ քրիստոնյաները՝ մնալ վտարանդի[28]:

Ստեղծված իրավիճակը Լեփսիուսին համակել էր նոր աղետների և հուսախաբությունների ծանր նախազգացումով. «Արդյո՞ք քրիստոնյաների խիղճը համաշխարհային պատերազմի պատճառով այն աստիճան է տկարացել և բթացել, որ իրավունքն ու մարդկայնությունը դարձել են դատարկ խոսքեր: ...Արդյո՞ք «դաշնակից և միացյալ տերությունները», որոնք երաշխավոր են եղել Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնությունների պաշտպանության համար, այդ ասելով իրոք այլ բան չեն հասկացել, եթե ոչ մահմեդական գերեզմանափորների և քրիստոնյա զանգվածների գերեզմանների պաշտպանությունը...»[29]:

Հետագա ամիսները զարմանալի ճշգրտությամբ փաստեցին Լեփսիուսի նաև այդ կանխատեսումները: Այնուամենայնիվ, նա Հայկական հարցի վերոնշյալ զարգացումների նկատմամբ հայեցողական կեցվածք չէր որդեգրել, այլ գործադրում էր իր բոլոր ջանքերը՝ անհավանականն իսկ հնարավոր դարձնելու և ընդունված որոշումների իրականացմանը հասնելու համար: Այսպես, նրա նախաձեռնությամբ, 1922 թ. նոյեմբերի 15-ին Բեռլինից Լոզանի համաժողովին հղվեց 272 ստորագրություններով մի ընդարձակ կոչ, որում ուշադրություն էր հրավիրվում աշխարհասփյուռ հայերի ծանր դրության, նրանց իրավունքների և խոստացված «Ազգային օջախի» ստեղծման անհրաժեշտության վրա[30]: «Նրանք այլևս չեն կարող տանել իրենց տառապանքների բեռը, և մենք էլ այլևս չենք կարող տանել մեր լռության բեռը ...: Այս հանդիսավոր պահին, երբ վտանգված է մի ամբողջ ազգի գոյատևումը, նյութական, քաղաքական շահերով տարված եսակենտրոնությունը ոչ մի գնով չպետք է խեղդի մեր ձայնը: Մենք ավելի շատ համոզված ենք, որ այդ շահերը, որքան էլ դրանք հիմնավորված լինեն, միայն այն դեպքում կարող են օրինական լինել, երբ իրավունքի և մարդկայնության համար կատարվող նախազգուշացման կանչը անհետևանք չի կորչում: Այն, ինչ մենք հայերի համար պահանջում ենք, մի անկախ «Ազգային օջախ» է, որի անվիճելի իրավունքը այդ հնագույն ժողովուրդն այսօր ունի ավելի, քան երբևէ:... Մենք մեր ձայնը միացնում ենք բոլոր ազգերի՝ հայերի բարեկամների ձայներին՝ այն պահանջով, որ հայ ժողովրդին օգնություն ցուցաբերվի՝ տիրանալու իր իրավունքին: ... Մենք չենք կարող հանդուրժել այն միտքը, որ հայ ժողովուրդը միակն է, որն իր միլիոնավոր զավակներին զոհաբերելուց հետո կարող է դարձյալ զրկված լինել իր իրավունքներից և ազատությունից»[31]:

Կոչի հեղինակները, որոնց թվում էին պրոֆեսոր Ա. ֆոն Հառնակը, Ա. Վեգները, Թ. Մանը, Է. Բանզեն, պրոֆեսոր Յ. Մարկվարտը, դոկտոր Մ. Նիպագեն, պրոֆեսոր Յ. Ռիխտերը և այլ համբավավոր գրողներ, եկեղեցականներ, մշակութային ու քաղաքական գործիչներ, «Սևրի խաղաղության հետ կապված՝ շատ ավելի մեծ

[28] Տես նույն տեղում, էջ 53–54:

[29] Տես «Quo usque tandem?». «Der Orient», 1922, S. 57:

[30] Տես «Aufruf an die Friedenskonferenz zu Lausanne». «Der Orient», 1922, S. 93–96:

[31] Տես նույն տեղում, էջ 93–95:

սպասումներից» հետո «Ազգային օջախի» ստեղծումը համարում էին միակ և վերջին միջոցը, որը կարող էր աշխարհասփյուռ հայությանը հաստատուն ապագա և հայերին ու թուրքերին՝ խաղաղ գոյակցության հնարավորություն ընձեռել: Նրանք դա կարևոր էին համարում նաև հարյուր հազարավոր որբերի ապագան ապահովագրելու առումով, որբերի, որոնք ժամանակավոր կացարաններում սպասում էին խաղաղության հաստատմանը՝ «իրենց խնամքը և դաստիարակությունը նոր հայրենիքում ստանալու համար»[32]:

Այդ սրտառուչ կոչը նույնպես անկարող եղավ հակազդելու «նյութական շահերի» գերակայությանը: Լոզանում, ինչպես հայտնի է, «Ազգային օջախի» հետ կապված վերջին հույսերը ևս հօդս ցնդեցին, իսկ Հայկական հարցը դուրս եկավ մեծ տերությունների քաղաքականության օրակարգից: Լեփսիուսը Հայկական հարցի այդ տխրահռչակ «լուծման» և համաժողովի վերաբերյալ իր նկատառումներն ամբողջականորեն ներկայացրեց «Հայկական հարցը Լոզանում» և «Իրադրությունը Հայաստանում» հոդվածներում, որոնք հրատարակվեցին 1923 թ. սկզբին: Նրա համոզմամբ՝ Լոզանի համաժողովը ոչ այլ ինչ էր, եթե ոչ տասնամյակներ ի վեր դիվանագետների «խաղագնդակը» և մեծ տերությունների «կովախնճորը» դարձած Հայկական հարցի շահարկումների տրամաբանական ավարտը: 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Արևելքի քրիստոնյաների «հովանավորներն» իրենց քաղաքական շախմատի տախտակի վրա հայ զինվորին շարունակ այս ու այն կողմ էին տանում, որպեսզի, երբ իրենց «եսական» շահը պահանջեր, նրան զոհաբերեին: Եվ այդ զոհաբերման արարողությունը կատարվեց Լոզանում: Հայկական հարցի և հայ ժողովրդի ողբերգությունների պատմությունը սպառիչ կերպով փաստում էր, որ մեծ տերությունների քաղաքագետները, «ճամարտակելով» քրիստոնեության և մարդասիրության մասին, իրականում հետապնդում էին միայն իրենց նյութական շահերը, քաղաքագետներ, նշում էր նա, որոնք «երբ մարդասիրությունից են խոսում, նկատի ունեն իրենց ֆինանսական գործարքները, իսկ երբ արդարությունից են խոսում՝ նավթը»[33]:

Իր մեկ այլ՝ «Շուտ տված խաչակրաց արշավանքը», հոդվածում սպանիչ ծաղրով ներկայացնելով հայ ժողովրդի հովանավորությունն ստանձնած տերությունների խոսքի և գործի հակասականությունը՝ Լեփսիուսը 1895–1923 թթ. նրանց վարած քաղաքականությունը բնութագրում էր որպես ութերորդ խաչակրաց արշավանք, որի կարգախոսը Արևելքի քրիստոնյաների պաշտպանությունն էր, սակայն իրական նպատակը «նավթահանքերի և քարածխի պաշարների ազատագրումն էր»: Ոխտի, զարմանալի չէր, որ հայ ժողովրդի շահերի այդօրինակ «պաշտպանությունը» շարունակ հանգեցնում էր նրա դրության վատթարացմանը, մի գործընթացի, որն իր հանգուցալուծումն ստացավ աքսորի անապատներում և Լոզանում[34]: «Անտանտի երկրների կառավարությունների համար հավերժական խայտառակություն կմնա այն, որ նրանք, իրենց պատժամիջոցներով և վերահսկիչ հանձնաժողովներով քրիստոնյա Գերմանիայի հետ վարվելով թուր-

[32] Տես նույն տեղում, էջ 94:

[33] *J. Lepsius.* Die armenische Frage in Lausanne. «Der Orient», 1923, S. 3.

[34] Տես *J. Lepsius.* Der umgekehrte Kreuzzug. «Der Orient», 1922, S. 98–101:

քաբար, հաղթված Թուրքիային թույլ տվեցին իր քրիստոնյաներին օրենքից դուրս հայտարարել և պատերազմում փորձված աքսորների, կոտորածների ու վտարումների համակարգը մեծագույն մասշտաբներով շարունակել այնքան, մինչև ի վերջո Անտանտի հավանությամբ քեմալականները վերացրին ամբողջ Փոքր Ասիայի քրիստոնյա բնակչությանը»[35]:

Այնուամենայնիվ, Լեփսիուսն այն կարծիքին էր, որ Թուրքիան իր հայահալած քաղաքականությամբ դատապարտվեց տնտեսական փլուզման, քանի որ նրա տնտեսության հիմնական լուծը կրում էին հայերը, որոնք իրենց բնածին տոկունությամբ դարձյալ կկարողանան ասպարեզ գտնել իրենց «անխոնջ աշխատասիրության համար», և այնքան ամուր արմատներ գցել, որ միայն «Աստված գիտե, թե ով ավելի երկար կյանք կունենա, հայ ժողովու՞րդը, թե՞ նրա դահիճները»: Ավելին, Լեփսիուսի համոզմամբ՝ Հայկական հարցը Լոզանում ոչ թե վերացվել, այլ միայն հետաձգվել էր, և Թուրքիան չկարողացավ օգտագործել նվազագույն կորուստներով այդ հարցից մեկընդմիշտ ազատվելու՝ իրեն տրված պատմական հնարավորությունը, որի համար նա ապագայում ստիպված պետք է լիներ անհամեմատ ավելին հատուցել. «Թուրքիան հնարավորություն ուներ հայկական հանրապետությանը մի տարածք զիջելով կամ Կիլիկիայի մի մասում հայ փախստականների համար հայկական «Օջախ» ստեղծելով նվազագույն կորուստների գնով հայերին հաշտեցնելու, իր գործած անհիրավությունները որոշ չափով ուղղելու և՝ ամեն դեպքում, ընդմիշտ ազատվելու Հայկական հարցից: Սակայն նա չօգտագործեց այդ նպաստավոր առիթը: Հայկական հարցը հետաձգվել է, բայց չի վերացել, և այն ցանկացած ժամանակ դարձյալ ի հայտ կգա, երբ այս կամ այն պետությանն անհրաժեշտ լինի Թուրքիայում նվաճումներ կատարելու համար այն օգտագործել որպես պատրվակ: Այդ ժամանակ կհիշեցվեն նաև Վիլսոնի սահմանները և հայկական ջարդերը: Քանի դեռ Հայկական հարցը լուծված չէ, այն շարունակ, ինչպես Դամոկլյան սուր, կճոճվի Թուրքիայի գլխավերևում, մինչև վերջապես ասիական Թուրքիայի համար կդառնա նույնը, ինչ Հունական կամ Բուլղարական հարցերն են եղել եվրոպական Թուրքիայի համար»[36]:

1924–1925 թթ. Լեփսիուսի ուշադրությունը բևեռված էր նաև հայկական շրջաններին հուզող մեկ այլ կարևոր հարցի վրա: Թուրքական կառավարությունը, պատերազմի ընթացքում տարագրված և բնաջնջված հայերի ունեցվածքի մի մասը դրամի վերածելով, ներդրել էր Բեռլինի պետական բանկում. ընդհանուր հաշվով՝ 5 միլիոն թուրքական ֆունտ, որը զինադադարից հետո տեղափոխվեց Մեծ Բրիտանիա, և 1923 թ. նոյեմբերի 23-ին Փարիզում ստորագրված մի համաձայնագրով նախատեսվում էր օգտագործել պատերազմի ընթացքում Թուրքիայում ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի քաղաքացիների կրած կորուստները հատուցելու համար[37]: 1925 թ. հունվարին, երբ այդ կորուստների հաշվառման նպատակով Փարիզում ձևավորվեց մի հանձնաժողով, Փարիզի Հայ

[35] *J. Lepsius.* Unser Waisenhausplan. «Der Orient», 1923, S. 37.

[36] *J. Lepsius.* Die Lage in Armenien. «Der Orient», 1923, S. 18–19.

[37] Տես «Das Schicksal von 5 Millionen türkischen Pfund». «Der Orient», 1925, S. 68–70:

փախստականների կենտրոնական կոմիտեն (ՀՓԿԿ) դիմեց նրան մի կոչով, որում հիմնավորվում էր այդ դրամագլխի բուն պատկանելությունը և կոչ էր արվում դրա գոնե մի մասը վերադարձնելու աքսոր վերապրած հայերին և շուրջ 100000-ի հասնող հայ որբերին[38]:

Լեփսիուսն իր պարբերականում՝ հրապարակեց թե՛ կոչը, թե՛ դրամագլխի առաջացման շարժառիթները փաստող վկայություններն ամբողջությամբ՝ միևնույն ժամանակ իր զորակցությունը հայտնելով ՀՓԿԿ-ին: Նրա համոզմամբ՝ այդ վկայություններից նույնիսկ միայն մեկը՝ Էրզրումի վիլայեթի վալի Թահսին բեյի վկայությունը, բավական էր հայկական կողմի պահանջն արդար համարելու և բավարարելու համար[39]: Լեփսիուսն այս փաստը գնահատեց որպես հայ ժողովրդի զանգվածային տեղահանության և աքսորի մի նոր անառարկելի ապացույց, որը կարող էր օգտագործվել այն հերքելու ջանքեր գործադրող՝ նորագույն շրջանի թուրք պատմաբանների և քաղաքագետների դեմ: «Այդ 5 միլիոն թուրքական ֆունտի ճակատագիրն ունի կարևոր փաստագրական արժեք,– նշում էր նա,– որովհետև Թահսին բեյի նամակում հաստատվում է թուրքերի կողմից հայերի ազգային ունեցվածքի կողոպտումը և, բացի այդ, խոստովանություն է արվում նաև Թուրքիայի հայության զանգվածային աքսորի մասին, որն առանց այդ էլ փաստարկման կարիք չունի: Ցանկալի կլիներ, որ ինչպես անմիջապես պատերազմից հետո էր, ազնիվ թուրքերը երիտթուրքական կառավարության անարգ գործերն ընդունեն և դրանով գեթ անձամբ իրենց մաքրեն համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցած մեծագույն հանցագործությանը մեղսակցությունից»[40]:

[38] Տես նույն տեղում:

[39] Խոսքը վերաբերում էր «Ջումհուրիեթի»՝ 1924 թ. դեկտեմբերի 19-ի համարում հրապարակված Թահսին բեյի այն տեղեկությանը, որով նա փորձում էր արդարանալ գողության մեջ մեղադրվելուց. «Մինչև աքսորման հրամանը Էրզրումի հայերն իրենց թանկարժեք քարերը և ոսկին անդորրագրերի դիմաց ավանդ էին հանձնել Օտոմանյան բանկին: Աքսորից հետո ֆինանսների նախարարությունը Օտոմանյան բանկից հետ պահանջեց այդ պահ տված ունեցվածքը՝ վկայակոչելով «լքված գույքի» վերաբերյալ օրենքը: Երբ բանկը հրաժարվեց, սկսվեցին բանկի ղեկավարության և ֆինանսների նախարարության միջև երկարատև բանակցություններ, և ի վերջո, ֆինանսների նախարարության տված նյութական երաշխիքների հիման վրա, վճռվեց, որ Օտոմանյան բանկի Էրզրումի մասնաճյուղում հայերի պահ տված ամբողջ ունեցվածքը փոխանցվի ֆինանսների նախարարությանը: Դրա հետևանքով Ջեմալ բեյի լիազորված գեներալը, Էրզրումի բանկային բաժանմունքի ղեկավար միստեր Բալաղյուրը և Ջելալ բեյը փաթեթները կնքեցին հատուկ կնիքով, ապա Ջեմալ բեյը դրանք տեղափոխեց Կ. Պոլիս և հանձնեց ֆինանսների նախարարությանը՝ վերցնելով մի ստացական, որը դեռ գտնվում է ինձ մոտ, և մի լուսանկար, որը ես պատրաստ եմ հրապարակելու» (տես նույն տեղում, էջ 69–70):

[40] Տես նույն տեղում, էջ 70: Աքսորված հայերի ունեցվածքի բռնագրավումից գոյացած այդ դրամագլխի խնդիրը Լեփսիուսի մահից հետո ևս շարունակում էր մնալ նրա ընկերության տեսադաշտում, և այն հետևողականորեն հանդես էր գալիս տվյալ գումարները հայ որբերի խնամքին հատկացնելու պահանջով (տես «Das Armenische Hundertmillionen-Bankguthaben und England». «Der Orient», 1927, S. 113: Հմմտ. «Der Orient», 1927, S. 132: Հմմտ. «Armenien». «Der Orient», 1928, S. 25):

Թուրք կեղծարարների դեմ պայքարը Լեփսիուսը համարում էր ժամանակի ամենահրատապ պահանջներից մեկը: Այդ առումով նա իր առաջնային խնդիրն էր համարում հայ ժողովրդի հանդեպ գործադրված «ոճրագործությունների» նորագույն՝ 1919–1923 թվականներն ընդգրկող շրջանի լուսաբանումը, երբ եղեռն վերապրած արևմտահայության մնացորդները նույնպես հարկադրված եղան լքել իրենց պատմական հայրենիքը և փրկություն որոնել տարագրության մեջ: «Աքսորյալների ճակատագիրը, որոնք համակենտրոնացման ճամբարներից վերադարձան հայրենիք, և հաղթող տերությունների կողմից բախտի քմահաճույքին մատնված հայերի վերջնական վտարումը Թուրքիայից այդ երկրի պատմության և Եվրոպայի արևելյան քաղաքականության ամենասև գլուխներից է»[41]:

Իր նոր մտահղացումն իրագործելու համար Լեփսիուսը դեռ 1923 թ. վերջին մի ուղերձ հղեց հայ ժողովրդի «բոլոր բարեկամներին» և փորձություններով անցած հայերին՝ խնդրելով ներկայացնել վերոնշյալ շրջանին վերաբերող իրենց ուսումնասիրությունները, եթե այդպիսիք կային, ինչպես և կենսագրական տեղեկություններ, որոնք կարող էին հուսալի «ատաղձ» ծառայել իր ապագա աշխատության համար[42]: Ուշագրավ է, որ նա, թեև նախորդ՝ 1914–1918 թթ., շրջանը համարում էր բավականաչափ լուսաբանված, նկատի ունենալով իր «Հայ ժողովրդի մահուղին» և «Գերմանիան ու Հայաստանը» աշխատությունները, այնուամենայնիվ, չբացառելով, որ կարող էին լինել նաև այդ շրջանի վերաբերյալ իր ուշադրությունից վրիպած նյութեր, խնդրում էր դրանք ևս իր համար մատչելի դարձնել[43]:

Լեփսիուսն ուներ այլ կարևոր ծրագրեր ևս: Դեռ 1924 թ. նա նախատեսում էր բարեգործական աշխատանքներ նախաձեռնել նաև Խորհրդային Հայաստանում, և, ինչը ոչ պակաս ուշագրավ է, Գերմանիայում հիմնել Հայկական ակադեմիա կամ այլ կերպ ասած՝ մի գիտատուսումնական կենտրոն Հայ առաքելական և մյուս հին եկեղեցիներին աջակցություն ցուցաբերելու համար[44]: Ցավոք, Լեփսիուսին վիճակված չէր իրականացնել իր այդ և մյուս ծրագրերը: 1925 թ. նրա առողջական վիճակը կտրուկ վատթարացավ: Աշնանը նա հարկադրված էր բուժման նպատակով մեկնել Իտալիայի Մերանո քաղաքը[45], որտեղ էլ 1926 թ. փետրվարի 3-ին վախճանվեց:

Անհնար է գերագնահատել մեծ գործչի հայանվեր գործունեությունը: Թեև նա չկարողացավ շուռ տալ պատմության անիվն ու փոխել մեծ տերությունների քաղաքականությունը, բայց և այնպես վճռորոշ դեր ունեցավ արևմտահայության եղերական ճակատագրի լուսաբանման, հայկական հարցի միջազգայնացման և համապարփակ օգնության աշխատանքների ծավալման համար, ինչի շնորհիվ հազարավոր տարագիրներ, որբեր և այրիներ փրկվեցին անխուսափելի մահից:

[41] *J. Lepsius*. Eine Bitte. «Der Orient», 1923, S. 41.

[42] Տես նույն տեղում:

[43] Տես նույն տեղում:

[44] Տես *J. Lepsius*. Orient-Mission. «Der Orient», 1924, S. 36:

[45] Տես *Ռ. Շեֆեր*, Նշ. աշխ., էջ 118:

ГЕНОЦИД АРМЯН И АРМЯНСКИЙ ВОПРОС В ПОСЛЕВОЕННОЙ ПУБЛИЦИСТИКЕ ИОГАННЕСА ЛЕПСИУСА

А. Н. АЙРУНИ, доктор исторических наук, профессор кафедры армянской истории ЕГУ

РЕЗЮМЕ

После Первой мировой войны Иоганнес Лепсиус продолжал всецело служить делу осуждения преступлений против армянского народа и справедливого наказания за них. В основанном им периодическом издании Лепсиус в 1918 году опубликовал статью «Что сделали с армянами?», в которой отмечал, что армяне, численность которых в Турции до войны достигала 1,75 млн человек, во время войны были депортированы турецким правительством с Армянского нагорья, из Анатолии, Киликии и Месопотамии в арабские пустыни, их имущество было конфисковано и разграблено, население в пути частью было вырезано, частью – в местах высылки – погибло от голода и болезней. Число жертв, по оценкам германского посольства и консульств, достигало 1 млн человек, половину которых составляли женщины и дети. Около четверти миллиона женщин и девушек было подвергнуто насильственной исламизации и помещено в гаремы турок и курдов. Такое же число армян, бросив все свое имущество, бежало на Кавказ. В концентрационных лагерях в сирийской пустыне еще оставалось около 150 тысяч человек, которых можно было бы спасти в случае оказания немедленной помощи.

В мае 1919 года вышел в свет подготовленный Лепсиусом сборник документов «Германия и Армения в 1914–1918 гг.», состоявший из 444 сообщений не только немецких дипломатических источников о депортации, ссылках и резне армян, но и, материалов, свидетельствующих о позиции Германии в Армянском вопросе. На основе изучения этих материалов Лепсиус пришел к выводу, что обвинения в адрес Германии в соучастии в Геноциде армян несостоятельны (следует отметить, что Лепсиусу были предоставлены далеко не все имевшиеся в наличии в МИД Германии документы), однако она несет моральную ответственность за преступления, совершенные своим союзником, и, следовательно, должна помочь оставшимся в живых армянам, в первую очередь – десяткам тысяч сирот.

И. Лепсиус внимательно прослеживал и ход мирного процесса, который должен был иметь судьбоносное значение для армянского народа. В 1923 году он опубликовал свои статьи «Армянский вопрос в Лозанне» и «Обстановка в Армении», в которых констатировал, что политики больших государств, прикрываясь высокомерными речами о гуманизме и защите

христианства, на самом деле преследовали сугубо эгоистические материальные интересы: «говоря о гуманизме, имеют в виду свои финансовые операции, а говоря о справедливости – нефть».

В 1924–1925 гг. в центре внимания Лепсиуса был вопрос той части имущества истребленных армян, которая в денежной форме была помещена в государственный банк Берлина.

Лепсиус считал своей первоочередной задачей также борьбу против турецких фальсификаторов истории.

THE ARMENIAN GENOCIDE AND THE ARMENIAN ISSUE IN JOHANNES LEPSIUS' POST-WAR PUBLICITY

A. N. HAYRUNI, Doctor of History, Professor, Chair of the History of Armenia, YSU

SUMMARY

After the World War I Johannes Lepsius kept thoroughly serving to the cause of condemnation of crimes against the Armenian people and the just punishment for them. Lepsius published an article titled "What did they do with the Armenians?" in 1918 in the periodical founded by him, where he mentioned that the Armenians, whose number in Turkey before the war reached 1.75 million people, were deported during the war by the Turkish government from the Armenian Highlands, Anatolia, Cilicia, and Mesopotamia into the Arabian Desert, their property was confiscated and looted, the population was partly slaughtered en route, partly – in the places of exile – died of starvation and diseases. The number of victims, as estimated by the German embassy and consulates, reached 1 million people, half of which were women and children. About a quarter of a million women and girls were forcibly subjected to Islamization and taken to the Turks' and Kurds' harems. As many of destitute Armenians fled to the Caucasus. About 150 thousand people, who could have been saved if immediate help was provided, were still in the concentration camps in the Syrian Desert.

A collection of documents prepared by Lepsius and titled "Germany and Armenia in 1914 – 1918" was published in May 1919. It consisted of 444 reports not only of the German diplomatic sources on deportation, exiles and massacre of the Armenians, but also of material indicative of Germany's position in the Armenian issue. Based on the study of this material Lepsius concluded that the imputations against Germany of complicity in the Armenian Genocide had been unsound (it should be noted that not all the documents available in the German Foreign Office were given to Lepsius), but it had a moral responsibility for the

crimes committed by its ally, and, therefore, should help the survived Armenians, and in the first place – to tens of thousands of orphans.

J. Lepsius carefully saw to the peaceful process as well, which was supposed to have a crucial significance for the Armenian people. In 1923 he published his articles "The Armenian Issue in Lausanne" and "The situation in Armenia", where he stated that the politicians of great states, taking refuge in arrogant speeches about humanism and the defense of Christianity, in fact pursued purely self-serving material interests, "speaking of humanism, they have in mind their financial operations, and speaking of justice – the oil".

In 1924 – 1925 Lepsius focused upon the issue of that part of property of the slaughtered Armenians, which had been deposited in monetary form in the State Bank of Berlin.

Lepsius considered his top-priority task also the struggle against the Turkish falsifiers of history.